

ՇԻՐԱԿՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Հունիս ամսի 25-ին, շաբաթ օրը, Լենինական ժամանեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան սրբազան արքեպիսկոպոս Կոստանյանը։ Սրբազանին ուղեկցում էին բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը և հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղան։ Բարձրաստիճան հյուրին դիմավորելու համար բազմահարյուր հավատացյալներ հավաքվել էին Ս. Աստվածածին մեկեղեցու շրջափակում։ Սրբազանը եկեղեցական թափորով և «Հրաշափառ» շարականով առաջնորդվեց եկեղեցի, որը զարդարված էր տոնականորեն։

Հավատացյալները հոգեկան հրճվանքով ընդունեցին սրբազան հոր բերած՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության ողջույններն ու օրհնությունները։

Հավարտ երեկոյան հանդիսավոր ժամերգության, Նորին Սրբազնությունը կատարեց բարեկրոն դպիր Արամ Բոյաջյանի սարկավագ ձեռնադրության կոչման հանդիսավոր և խորհրդավոր արարողությունը։ Խարտավիլակի պաշտոնը կատարում էր Տ. Կոմիտաս վարդապետը։ Կոչման արարողությունը շարունակվեց մինչև ուշ երեկո։

Հաջորդ օր, 26 հունիս կիրակի, Տ. Մուշեղ աբեղան մատուցեց սուրբ պատարագ։ Եկեղեցին և վերնատունը լցվել էր հավատացյալների աննախընթաց բազմությամբ։ Սրբազանը կատարեց սարկավագական և քահանայական շնորհաբաշխություն, նորընծային անվանակոչելով իր ավագանի անունով Տ. Արամ։ Օծումից հետո սրբազանը խոսեց մի հոգեշունչ քարոզ և ծանրացավ մասնավոր կերպով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայ ժողովրդի կյանքում կատարած նախախնամական պատմական դերի մասին՝ ազգային գոյության պահպանման և հայ մշակույթի զարգացման և պահպանման գործում։ Ապա խոսեց տասնվեց դարերի պատկառելի հնությամբ հավերժացած Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության մասին՝ հայկական հարազատ կառավարության ծախսով։ Իր քարոզի վերջում սրբազանը գոհունակություն հայտնեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ գերապատիվ Տ. Գևորգ ծայրագույն վարդապետ Վարթյանի շինարարական-վարչական գործունեության մասին։ Մեծ խանդավառություն առաջացրեց սրբազան հոր այն հայտարարությունը, թե մոտ օրից սգի շղարշը կվերանա Մայր Աթոռից արժանավոր Գահակալի ընտրությամբ սեպտեմբեր ամսում։

Նույն օրը Վահան սրբազանը, հայր սուրբի ընկերակցությամբ, այցելեց Արթիկի շրջանի Վահրամա վանքը, իսկ հաջորդ առավոտուն վերադարձավ Ս. Էջմիածին։

Հուլիսի 3-ին, կիրակի օր, առաջնորդական փոխանորդ հայր սուրբը, նորընծա Տ. Արամ քահանայի և դպրաց դասի հետ գնաց Կիրովական և թափորով առաջնորդվեց եկեղեցի, ուր և մատուցեց սուրբ պատարագ և բանին կենաց քարոզությամբ մխիթարեց հավատացյալներին։

Առաջնորդական փոխանորդ հայր սուրբը իր հովվական հաճախակի այցելություններով մխիթարում է Շիրակի թեմին ենթակա բոլոր հայ հավատացյալներին։ Իր այցելությունների ընթացքում հայր սուրբը զբաղվում է եկեղեցիների, հոգաբարձությունների, վանքերի վարչական-տնտեսական հարցերով և անում է ինչ անհրաժեշտ է թեմի եկեղեցիների պայծառացման համար։

Հ. ՊԱԼՅԱՆ